Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 494 - Ա
որոշման

Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 217-Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՆՏԱՌԱՊԱՏՈՒՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հիմնել նոր անտառներ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում՝ մասնակցելով «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 610-Լ որոշմամբ հաստատված ազգային նպատակի իրականացմանը, որով մասնավորապես նախատեսվում է անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9% չափով մինչև 2030 թվականը: Նոր հիմնվող անտառը հնարավորություն է տալու կանխել տեղանքում սողանքները, պահպանել խմելու ջրի պաշարները և կլանել ածխաթթու գազի հավելյալ ծավալներ: Ծրագրի շրջանակներում նախատեսում ենք իրականացնել մոտ 230 հա տարածքի անտառապատում ՀՀ Լոռու մարզում Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի համայնքային հողերում, ինչպես նաև ընդլայնել տնկիների աճեցման ծավալները 2024 թվականի անտառապատման ծրագրի համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանություն (Հայաստանի Հանրապետության, 0037, քաղ. Երևան, Բաբայան փողոց 23/4)

		Հայկական բժշկական ասոցիացիա (ԱՄՆ, Նյու Յորք 10920-2622, քաղաք Քոնգըրս, Ուոթըրս Էդջ փողոց 160 / Armenian Medical Fund, 160 Waters Edge, Congers, New York 10920-2622) Մայ Ֆորեսթ Հիմնադրամ (ԱՄՆ, Քալիֆոռնիա 94103, քաղաք Սան Ֆրանցիսկո, Բրաննան փողոց 888, գրասենյակ 160 / MY FOREST FOUNDATION INC 888 BRANNAN STREET SUITE 160 SAN FRANCISCO, CA 94103) Ուան Թրի Փլանթիդ (ԱՄՆ, Վերմոնթ 05482, քաղաք Շելբըրն, Փայն Հեյվըն Շորս փողոց 1000D / One Tree Planted, 145 Pine Haven Shores Rd #1000D, Shelburne, Vermont, 05482, US)
4.	Ծրագիրը կատարողը	«Մայֆորեսթ.էյէմ» հասարակական կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 02699418 Իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան 0010, Հյուսիսային պողոտա 8, բն. 16 Գործունեության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան 0038, Աբեղյան 6/4
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, բնապահպանության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	228,467,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Ստեփանավան համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Գուգարքի տնկարանի տարածքում անտառային տնկիների ջերմոցի կառուցման և ցանքսի աշխատանքների իրականացում՝ 40,093,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը, 2. Մոտ մեկ միլիոն տնկիների աճեցման և խնամքի աշխատանքների իրականացում Գուգարքի և Դեբետի տնկարաններում և Վանաձորի

		ջերմոցում՝ 56,254,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը, 3. Հակակարկտային ցանցի ձեռքբերում և տեղադրում Գուգարքի տնկարանում՝ 8,275,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը, 4. Խնամքի ու աճեցման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում և աշխատանքային փակ տարածքի ջերմամեկուսացում՝ 1,630,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը, 5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուրասար բնակավայրի համայնքային հողերում անտառտնկման տարածքի ցանկապատում՝ 1,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը 6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուրասար բնակավայրի համայնքային հողերում մոտ 800,000 ծառի տունկ՝ 69,910,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել գարնանը՝ մարտ-ապրիլ ամիսներին և աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: 7. Լոռու մարզում անտառտնկման տարածքներում՝ Ուրասարի և Ձրաշենի համայնքային հողերում խնամքի աշխատանքների իրականացում՝ 27,855,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մայիս – հուլիս ամիսներին: 8. Երկու մեքենայի ձեռքբերում կամ ներմուծում (բեռնատար և մարդատար) լեռնային դժվարհասանելի տարածքներում անտառտնկողների, տնկանյութի և այլ պարագաների տեղափոխումն իրականացնելու համար՝ 22,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը: 9. Անօդաչու սարքի ձեռքբերում կամ ներմուծում մոնիթորինգի իրականացման համար՝ 800,000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև թվականի փետրվարի 15-ը:

		10. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 650,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Ջերմոցի կառուցման համար հողային աշխատանքների իրականացում – 12,514,000 դրամ: 2. 506 քմ ջերմոցի ձեռքբերում, որը ներառում է ցինկապատ թունելային կոնստրուկցիան, պոլիէթիլենային թաղանթը, հովացման համակարգը, բոլոր անհրաժեշտ էլեկտրական սարքավորումները և նյութերը ու տեղադրման աշխատանքների իրականացում – 11,039,000 դրամ: 3. Ջերմոցի ոռոգման համակարգի ձեռքբերում և տեղադրման աշխատանքների իրականացում – 870,000 դրամ: 4. Մետաղյա սեղանների ձեռքբերում նոր կառուցվող ջերմոցի համար - 2,170,000 դրամ: 5. Թաղարների համար պլաստիկ տուփերի ձեռքբերում – 1,500,000 դրամ: 6. Պլաստիկ թաղարների ձեռքբերում – 5,000,000 դրամ: 7. Հողախառնուրդի ձեռքբերում ջերմոցի համար – 6,364,000 դրամ: 8. Հակակարկտային ցանցի ձեռքբերում և տեղադրման աշխատանքների իրականացում Գուգարքի տնկարանում - 8,275,000 դրամ: 9. Խոտհնձիչի, առու հանող ու վար անող խոփերի և սայլակի ձեռքբերում Գուգարքի տնկարանի համար – 630,000 դրամ: 10. Գուգարքի տնկարանի աշխատանքային փակ տարածքի ջերմամեկուսացման համար նյութերի ձեռքբերում – 1,000,000 դրամ: 11. Անտառպատման տարածքի ցանկապատման համար փշալարի ձեռքբերում – 1,000,000 դրամ: 12. ՈՒԱԶ Patriot Pickup մեքենայի ձեռքբերում կամ ներմուծում – 11,000,000 դրամ: Նվիրատու՝ Հայկական բժշկական ասոցիացիա, ԱՄՆ: Ծրագիրը լինելու է շարունակական և հաջորդ տարիներին մեքենան օգտագործվելու է նույն նպատակով:

		13. ՈՒԱԶ Patriot Pickup բաց բեռնատարի ձեռքբերում կամ ներմուծում - 11,000,000 դրամ: Նվիրատու՝ Մայ Ֆորեսթ Հիմնադրամ, ԱՄՆ: Ծրագիրը լինելու է շարունակական և հաջորդ տարիներին մեքենան օգտագործվելու է նույն նպատակով: 14. Անտառապատման տարածքների մոնիթորինգի անօդաչու սարքի ձեռքբերում կամ ներմուծում – 800,000 դրամ Նվիրատու՝ Մայ Ֆորեսթ Հիմնադրամ, ԱՄՆ: Ծրագիրը լինելու է շարունակական և հաջորդ տարիներին սարքն օգտագործվելու է նույն նպատակով: 15. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում – 650,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում – 650,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցում ենք Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես Ստեփանավանի, Սպիտակի համայնքների, Վանաձորի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ